

ՊՆԱԿՏՈՒՄ

ԻՐԱԿԻ ԴԱՐԻՔԱՆՎԻՒՄ. «ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ԶԷ ՄԵԿ ՆԱԽԱՐԱՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԻՑ»



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, հատուկ հրավիրված ճեպատվիում հայտարարեց պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի պաշտոնաթողության մասին:

պետական միջոցների վատմամբ մեղադրանքով ձերբակալել էր երկրի պաշտպանության նախարարության մի քանի բարձրաստիճանավորների: Անցած շաբաթ վատմուններ կատարած կասկածալից քննության արդյունքում նախարարության բարձրաստիճանավորների ձերբակալությունները դատախազությունն իրականացրեց նախարար Իրակլի Ալասանիայի արտասահմանյան ուղևորության ժամանակ: Ֆրանսիա եւ Գերմանիա կատարած ուղևորությունից վերադառնալուց հետո Իրակլի Ալասանիան, «Մեր Վրաստան-Ազատ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի գլխավոր դատախազությունը առանձնապես մեծ չափերի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԿՈՉ ԶԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ԶԱՆՈՒԹՅԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱԶԸ ՄԱՍՆԱԿՅԵՑ ՄԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, նոյեմբերի 3-5-ին, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում մասնակցեց զարգացող երկրների հարցով Միավորված ազգերի կազմակերպության խորհրդաժողովին:



Յիմնականում ծովի վրա ելք չունեցող երկրների զարգացման հարցերին նվիրված խորհրդաժողովում Վրաստանի նախագահը ներկաների ուշադրությունը բեւեռեց չկարգավորված հակամարտությունների վրա եւ միջազգային հանրությանը կոչ արեց ակտիվորեն ներգրավվել տարածաշրջանային դիմակայությունների լուծման գործում: Խոսելով ծովի վրա ելք չունեցող երկրների առջև ծառայած հիմնախնդիրների մասին, Վրաստանի նախագահը

նշեց, որ մայրցամաքի նման 14 երկրներից 8-ն օգտվում է Վրաստանով իրականացվող տարանցիկ փոխադրումներից: Որպես երկրի այդ ներուժի ավելացման արգելք Գիորգի Մարգվելաշվիլին նշեց Վրաստանի տարածքում առկա հակամարտությունները եւ հերթական անգամ ընդգծեց դրանց կարգավորման անհրաժեշտությունը:

Վիեննա կատարած այցի շրջանակներում Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունի, ԵԱԶԿ նախագահ Լամբերտո Զաների, Ավստրիայի նախագահ Յոհան Ֆիշլերի, պաշտոնական այլ անձանց հետ:

ԱՅՑ

ԸՆԴՊԾՎԵՑ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 2-ին, եռօրյա պաշտոնական այցով, Վրաստան ժամանեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (Մեջլիս) նախագահ Ջեմիլ Չիչեկը:

Այցի շրջանակներում Վրաստանի եւ Թուրքիայի խորհրդարանների նախագահներ Դավիթ Ուսուկաշվիլին եւ Ջեմիլ Չիչեկը

անցկացրին բանակցություններ, ինչից հետո հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

Նոյեմբերի 4-ին Թուրքիայի

խորհրդարանի նախագահն ուղևորվեց Բաթումի, որտեղ հանդիպում ունեցավ Աջարիայի կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեի հետ:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆԱԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱԳԱՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ինչպես արդեն հաղորդել ենք, նոյեմբերի 3-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հրաժարվեց վավերացնել գաղտնի լուծումների կապակցությամբ խորհրդարանի կողմից հոկտեմբերի 30-ին ընդունած որոշումը, ըստ որի՝ խորհրդարանը ընթացիկ տարվա նոյեմբերի մեկի փոխարեն 2015 թվականի փետրվարի

28-ին է ընդունելու որոշումը, որը վերաբերում է այն հարցին, թե որ սուբյեկտին է վերապահվում մատչելիությունը: Նախագահը խորհրդարանին առաջարկեց օրենքի ընդունման ժամկետը կրճատել մեկ ամսով:

Նախագահական վետոյի քննարկմանը, խորհրդարանը հրաժարվեց անցկացնել նախագահի արգելքի հաղթահարման գործառույթը: Ինչպես նշեց իրա-

վաբանական կոմիտեի նախագահ Վախթանգ Խանաձե, մեկ ամսում «բավականին դժվար է» լիարժեք օրենքի մշակումը, թեպետ իրենք կփորձեն «այդ ժամկետում ամել առավելագույնը»:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին ողջունեց նախագահի դիտողությունները հաշվի առնելու վերաբերյալ խորհրդարանի վերոնշյալ որոշումը, եւ այն հայտարարեց «միակ ճիշտը»:

(խորհրդի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԱՐԴԱԿԱՍԱՐ

ՏՎՅԱԼՆԵՐԸ ԶԱՅՏՆԻ ԿԴԱՌՆԱՆ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ

Նոյեմբերի 5-ին Վրաստանում մեկնարկեց ընդհանուր մարդահամարը: Երկու շաբաթվա ընթացքում շուրջ 10 հազար հատուկ պատրաստված աշխատողներ պետք է այցելեն երկրի յուրաքանչյուր բնակարան եւ տուն:

«Կիսավաքվի աննախադեպ մասշտաբների տեղեկատվություն: Նոյեմբերի վերջին բոլոր տվյալները կներկայացվեն «Սաքստատ»: Տոնամերով լրացված հարցարանները կտեղափոխվեն Թբիլիսի: Տվյալները մշակելու համար մեզ մոտավորապես մեկ տարի կպահանջվի»,- հայտնեց Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության «Սաքստատ»-ի փոխտնօրեն Թենգիզ Ցեկվաձան:

Մարդահամարը կշարունակվի մինչեւ նոյեմբերի 19-ը, հարցումների ընթացքում կարծանագրվի ընտանիքների կազմը եւ սոցիալ-

տնտեսական վիճակը:

Մարդահամարի նախնական ընդհանուր տվյալները կիրապարկվեն 2015 թվականի ապրիլին, իսկ վերջնական տվյալները՝ 2016 թվականի ապրիլին:

Վրաստանում վերջին անգամ մարդահամար է անցկացվել 2002 թվականին: Ըստ այդ տվյալների՝ հանրապետության բնակչությունը կազմում էր 4 մլն 371 հազար մարդ: Պլանավորվում էր մարդահամար անցկացնել 2010 թվականին, բայց այն ժամանակ հետաձգվեց միջոցների անբավարարության պատճառով:

ՄԵԾ ԵՂԵՈՆ - 100

ԿԱՅԱՆԱՎ ԼԱՅՈՑ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԼԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎԸ

2014 թվականի նոյեմբերի 4-ին «Չայարտուն» կենտրոնում կայացավ Չայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի տարածաշրջանային Վրաստանի հանձնախմբի հերթական ժողովը:



Այն բացեց հանձնախմբի նախագահ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը:

Հաշվի առնելով Վրաստանում հասարակական, պետական կառույցների եւ անհատ գործիչների Չայոց ցեղասպանության 100-րդ

տարելիցի շրջանակներում ծրագրեր կյանքի կոչելու ցանկությունը, հանձնախումբը այսուհետ կստանձնի առաջարկվող ծրագրերը համակարգելու եւ դրանց աջակցելու պարտավորությունը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԶԱՆԳԻՊՈՒՄ

ԹԲԻԼԻՍԻ ՍԱԿՐԵՐՈՒՄ ԱՉԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԼԱՅՏՆԵՑ

Նոյեմբերի 4-ին, Թբիլիսիի Սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին ընդունեց Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանին:

Կայացավ զրույց Թբիլիսիում Չայոց եկեղեցիների մերձակա տարածքի բարեկարգման վերաբերյալ: Վիրահայոց թեմի առաջնորդը ներկայացրեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու շրջակա տարածքի բարեկարգման եւ

հարակից կառույցների վերափոխման հարցը:

Սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին պատրաստակամություն հայտնեց ամեն կերպ օժանդակել Վիրահայոց թեմի առջև ծառայած խնդիրների լուծմանը:

ՆԱԽԱԳԱԶԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՎԻՐԱԶԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Նոյեմբերի 5-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու մատակարարում հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահի ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդական Սուփիո Շամանիդիի հետ:

Զրույցի ընթացքում Վիրահայոց թեմի առաջնորդը եւ Վրաստանի նախագահի խորհրդականը շոշափեցին Վիրահայոց թեմին հուզող հար-

ցերը: Սրբազան Չայոց դիմեց Սուփիո Շամանիդիին, որպեսզի աջակցու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ԸՆԴԳԾՎԵՑ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ


(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նոյեմբերի 3-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեկի հետ:

Հանդիպմանը գրույցի հիմնական թեմաներն են եղել երկրների միջև համագործակցության խորացումը, այդ թվում՝ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը և միջխորհրդարանական բարեկամության

խմբի ակտիվացումը:

Վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու խոսքով՝ Վրաստանը Թուրքիան դիտում է որպես հուսալի դաշնակից ու ռազմավարական գործընկեր եւ մեծ կարեւորություն է տալիս երկրի եվրատլանտյան ձգտումներին Անկարայի աջակցությամբ: Հանդիպմանը նշվեց նաեւ Բաբու-Թբիլիսի-Կարս երկաթուղային մայրուղու նախագծի կարեւորությունը, որը կխորացնի տարածաշրջանային համագործակցությունը տրանսպորտի ու առևտրի բնագավառներում:



ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍՆԸ՝ ԶԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՅԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ

Նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ում անցկացվեցին սենատի ու կոնգրեսի միջանկյալ ընտրություններ: Ընտրությունների արդյունքներով, ԱՄՆ հանրապետական կուսակցությունը վերջին ութ տարվա ընթացքում առաջին անգամ վերահսկողություն է ստացել Կոնգրեսի երկու պալատների՝ Սենատի ու Ներկայացուցիչների պալատի նկատմամբ:

Սենատի նախորդ կազմում նրանք ունեին 100 տեղից 45-ը: Միջանկյալ ընտրությունների արդյունքներով, հանրապետականները իրենց մանդատների թիվը ավելացրել են 10-ով:

Հանրապետականները, պահպանեցին նաև վերահսկողությունը Ներկայացուցիչների պալատի նկատմամբ: Պալատի 435 մանդատներից 242-ը պատկանում են նրանց (մինչ այդ նրանք ունեին 233 մանդատ):

ԿՍԿՍԵՆ ՑԱՍԱՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման հայտարարել է Իրաքում և Սիրիայում «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման դեմ պայքարում ամերիկյան բանակի հնարավոր օգտագործման մասին:

Նախագահը պատրաստվում է ԱՄՆ-ի Կոնգրեսից թույլտվություն խնդրել այդ ռազմարշավում ցամաքային զորքեր օգտագործելու համար:

Ավելի վաղ Վաշինգտոնում քանիցս հայտարարել են, որ ԱՄՆ-ը ԻՊ-ի դեմ միայն օդուժ է կիրառելու և չի ներգրավելու ցամաքային զորքեր:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԶԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ

Եվրոպական միությունը չի պատրաստվում վերանայել Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները: Այդ մասին հայտարարել է ԵՄ արտաքին քաղաքականության հարցերով ծառայության ներկայացուցիչ Մայա Կոսյանցիչը: Նրա խոսքով, «դրանք ինչպես եղել են, այդպես էլ մնում են մշտական հսկողության ներքո»:

ԵՄ-ի կողմից ՌԴ-ի նկատմամբ սահմանափակող քայլերը վերջին անգամ գնահատվել են հոկտեմբերի 28-ին: Այդ ժամանակ ԵՄ անդամ 28 երկրների ղեկավարները առաջարկներ չեն ներկայացրել ՌԴ-ի նկատմամբ սանկցիաների փոփոխման վերաբերյալ:

ՈՒԿՐԱԻՆԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՆՔՆԱՅՈՂԱԿ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դոնեցկի և Լուգանսկի ինքնառաջարկ ժողովրդական հանրապետությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովները նոյեմբերի 3-ին հայտարարել են նախարարական կայացած ընտրությունների արդյունքները: ԴժՖ-ում հանրապետության ղեկավարի ընտրություններում հաղթել է նրա գործող ղեկավար Ալեքսանդր Զախարչենկոն: ԼժՖ-ում նույնպես հաղթանակ է տարել հանրապետության գործող ղեկավարը՝ Իգոր Պլոտնիցկին:

ԴժՖ-ի խորհրդարանի ընտրություններում առավել մեծ թվով ձայներ է ստացել «Դոնեցկի հանրապետություն» հասարակական կազմակերպությունը: ԴժՖ-ի ընտրություններում անցկացվել են ավելի քան 300 ընտրական տեղամասերում: Ընտրողների ցուցակներում եղել են Դոնեցկի մարզի 16 եւ ավելի բարձր տարիքի բոլոր բնակիչները:

Ինքնառաջարկ հանրապետության խորհրդարանում չորս տարվա ընթացքում միստեր կզումարի հարյուր պատգամավոր:

Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն ԴժՖ-ի ընտրությունները որակել է «ֆարս» տանկերի փողերի ներքո»:

ՕՐԵՆԱԴԻՐ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՎՈՒՄ ԵՆ

Վրաստանի խորհրդարանը երրորդ ընթերցմամբ և վերջնականապես ընդունեց օրենքի փոփոխությունները, որոնց հաշվառմամբ Վրաստանի նախագահի գլխավորած Ազգային անվտանգության խորհուրդը կորցնում է մի շարք իրավասություններ:

«Ազգային անվտանգության խորհրդի մասին» օրենքի փոփոխությունների օգտին քվեարկել էր 80 պատգամավոր, դեմ՝ 21-ը:

Երկրի սահմանադրության համաձայն, Վրաստանի նախագահը գլխավորում է Ազգային անվտանգության խորհուրդը և հանդիսանում է զինված ուժերի գլխավոր իրամասնատարը: Իրավական բոլոր ակտերը, որոնք անմիջականորեն կապված են անվտանգության խորհրդի գործունեության, կամ ռազմական ու արտակարգ իրավիճակի հայտարարման հետ, այսուհետև համաձայնեցվելու են վարչապետի հետ:

Ընդունած փոփոխությունների համաձայն, խորհուրդը զրկվում է պաշտպանության ոլորտին չառնչվող ներքին ու արտաքին քաղաքականության հետ կապված հարցերի լուծման իրավունքից: Խորհուր-

դը միայն գնահատելու է պաշտպանության ոլորտի վիճակը և «ոչ թե ներքին ու արտաքին սպառնալիքներն ու երկրի անվտանգության ոլորտում առկա իրավիճակը»: Բացի այդ, Ազգային անվտանգության խորհուրդը չի ապահովի անվտանգության ազգային հիմնադրույթի մշակման գործընթացը և այդ հարցով միայն առաջարկություններ է ներկայացնելու: Սահմանադրության համաձայն, սույն հիմնադրույթը մշակում է հաստատում է կառավարությունը:

Անվտանգության խորհուրդը նաև զրկվում է կոռուպցիայի դեմ պայքարի, արտաքին քաղաքականության և իրավապահ մարմինների գործունեության ռազմավարության մշակման իրավունքից և կզբաղվի միայն երկրի պաշտպանության ոլորտին առնչվող հարցերով: Ընդսմին, Անվտանգության խորհուրդը պահպանում է մի-

ջազգային հակամարտությունների գոտու իրավիճակի, դրա զարգացման հեռանկարների ուսումնասիրման և վերլուծության, այդ երկրներ մտցնելու զինված ուժերի, օգտագործման և տեղաշարժերի վերաբերյալ նախագահի առաջարկությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում և արտակարգ իրավիճակներում, և, ներկայումս, երկրի պաշտպանության շահերից:

Անվտանգության խորհուրդը պահպանում է նաև զինված ուժերի թվաքանակության հարցի որոշման և այն, կառավարության կողմից մշակված երկրի պետության հետ միասին խորհրդարանի հաստատմանը ներկայացնելու իրավունքը: Միաժամանակ, Անվտանգության խորհուրդը զրկվում է ռազմական իրավիճակում տարածաշրջաններում նախագահի ներկայացուցիչ մշակակելու հարցի քննարկման, ազգային շահերին սպառնալիք բովանդակող ցանկացած ճգնաժամային իրավիճակի քաղաքական բարձր մակարդակով դեկլարելու իրավունքից:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆԱՏՕ-ԻՆ ԻՆՏԵՐՎԵՆՈՒ ԲԱՐԱՔԱՅԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՆԱՐՈՒՆԱԿԻ

Վրաստանի պաշտպանության նորանշանակ նախարար Մինդիա Ջանելիժեն, ելույթ ունենալով ճեպասուկիսում խոստացավ չփոխել եվրատլանտյան կառույցներին ինտեգրվելու և ՆԱՏՕ-ին մերժելու երկրի զինված ուժերի քաղաքականությունը:

«Զինված ուժերի զարգացման քաղաքականությունը մնում է անփոփոխ. դա կառավարության և վրաց ժողովրդի ընտրությունն է: Այն կնպատակառնվի եվրատլանտյան կառույցներին ինտեգրացվելու: Ամեն ինչ կանենք, որպեսզի է՛լ ավելի մոտենանք ՆԱՏՕ-ին», - հայտարարեց Ջանելիժեն:

Նրա խոսքով, պաշտպանական գերատեսչությունը կշարունակի համագործակցությունը երկրի համագործակցությունը երկրի ռազմավարական գործընկերների՝ ԱՄՆ-ի և եվրոպական երկրների հետ:



35 ամյա Մինդիա Ջանելիժեն ավարտել է Վրաստանի անվտանգության նախարարության ակադեմիան՝ հակահետախույզ-իրավաբանի մասնագիտությամբ: Լրացուցիչ կրթություն է ստացել ԱՄՆ-ում և Արեւմտյան Եվրոպայում:

Տարբեր պաշտոններ է զբաղեցրել հետախույզության պետական ղեկարարամենտում, գլխավորել է ՆԳ նախարարության հակահետախույզության ղեկարարամենտը: Ունի զննչապետի կոչում, պարգևատրվել է «Պատվո շքանշանով»:

Տիրապետում է անգլերեն, ռուսերեն և թուրքերեն լեզուներին: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

ՊԱՍՏԱ ԶԱՔԱՐԵԻՆԿՆԻ. «ԶԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՓՈԽԵԼ»



Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաստա Ջաքարեիշվիլու հավաստմամբ, «հակամարտության կարգավորման ընթացքում մենք պետք է փոխենք սահմանադրությունը»:

այն պետության կազմում իրենց զգան արժանավայել: Խորապես համոզված են, հենց որ օրակարգում դրվի համապատասխանությունների կարգավորման հարցը, մենք որոշակիորեն փոխելու ենք սահմանադրությունը, այլ կերպ ոչինչ չի ստացվի: Եթե ցանկանում ենք հակամարտությունները

կարգավորել ներկայիս սահմանադրությամբ, ապա տեղաշարժ չի լինի: Թեպետ դա բավականին հեռավոր հեռանկար է: Մինչ այդ պետք է ձեռնարկվեն քայլեր, և առաջին հերթին վերականգնվի վստահությունը: Պետք է վերականգնվեն տնտեսական, սոցիալական, քաղաքական հարաբերությունները, որից հետո

հնարավոր կլինի անցնել իրավական հարցերի քննարկմանը: Սակայն կասկածում եմ, որ ներկայիս սահմանադրության պայմաններում մեզ կհաջողվի կարգավորել հիմնախնդիրը», - «Սոսանք» լրատվական հաղորդմանը տված հարցազրույցում հայտարարեց Պաստա Ջաքարեիշվիլին:

ՀԱՆԴԴՈՒՄ

ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՒ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյուն ցուցաբերի Վրաստանում ծառայող հոգեւորականների կացության հետ կապված խնդիրների լուծմանը:

Հանդիպմանը բարձրացվեց այն քաղաքացիների հարցը, ովքեր երկրորդ երկրի քաղաքացիություն ունենալու պատճառով զրկվել են Վրաստանի քաղաքացիությունից:

Վրաստանի նախագահի ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդական Սոփիո Շամանդիդին խոստացավ ուսումնասիրել առաջարկված հարցերը և ուժերի սահմաններում օժանդակել դրանց լուծմանը:

Հանդիպմանը մասնակցեց Սամցխե-Ջավախեթիի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգեն



վարդապետ Սալբիյանը:

Ծարափից շարաֆ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ԵՎՍ ԶԻՆԳ ՆԱԽԱԳԻԾ

Օրերս Վրաստանի կառավարությունը «Արտադրիչ Վրաստանում» ծրագրի շրջանակներում հաստատեց եւս հինգ նախագիծ:

Այսօրվա դրությամբ, սույն ծրագրի շրջանակներում կառավարության կողմից հաստատված նախագծերի թիվը հասավ 27-ի: Այդ մասին հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:


«Դրանցից եկրուսը վերաբերում են թերխիսում շինանյութերի արտադրությանը, մեկական արտադրություններ՝ էլեկտրոդներին ու վերամակերիներ՝ էլեկտրաէներգիայի արտադրությանը, իսկ մյուսների կիրարկմանը կբացվեն անասնապահական խոշոր արտադրություններ»,- հայտարարեց նախարարը:

Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ խոսքը, ընդհանուր առմամբ, վերաբերում է 8 միլիոն դոլարի ներդրման: Նախագծի գործունեության ժամկետը երկու տարի է: Ծրագրված է աշխատանքով ապահովել շուրջ 400 մարդու:

Հիշեցնենք, որ Վրաստանի կառավարությունը «Արտադրիչ Վրաստանում» նախագիծն սկսեց կիրարկել ընթացիկ տարվա

հունիսի մեկից: Նախագծի բյուջեն կազմում էր 46 միլիոն լարի: Այդ գումարից 30 միլիոնը ծախսվելու է գյուղատնտեսական մթերքների արտադրության-վերամշակման վրա, իսկ մնացած 16 միլիոն լարին արդյունաբերական արտադրանքի թողարկման վրա: Նախագիծը համատեղ իրականացնում են Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման, ինչպես նաեւ գյուղատնտեսության նախարարությունները:

Նախագծի շրջանակներում տրվում են արտադրական վարկեր, որի տոկոսարդյույթի 10 տոկոսը վարկի հանձնումից 24 ամսվա ընթացքում մարում է կառավարությունը: Բանկերի կողմից տրվող վարկի նվազագույն չափը կազմում է 150 հազար դոլար, առավելագույնը՝ 2 միլիոն դոլար:



ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄՈՒՄ

Վրաստանի կառավարությունը հիմնել է տեղական ինքնակառավարման բարեփոխման եւ զարգացման հարցերով հանձնաժողով:

Ինչպես հայտարարեց կառավարության խորհրդարանական քարտուղար Շավաթա Ռադունաձեն, հանձնաժողովի գլխավոր խնդիրն է մշակել տեղական ինքնակառավարման արդյունավետ օպտիմալ համակարգի ստեղծմանն ուղղված առաջարկությունները, կազմել բարեփոխման գործընթացի համակարգմանն ու տեղական ինքնակառավարման գործառույթների օպտիմիզացմանն ուղղված հանձնարարականները:

Թաղումաձեի հայտարարությանը, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ գործող հանձնաժողովի կազմում ներգրավվել են բոլոր նախարարներն ու Աջարիայի կառավարության ղեկավարը:

ՁԵՎԱԿԵՐՊԿԵՑ ԶՈՒՇԱԳԻՐ

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման ազգային հանձնաժողովը Մոյեմբերի 3-ին հյուրընկալեց Հայաստանի էներգետիկայի հանձնաժողովի պատվիրակությանը՝ հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանի գլխավորությամբ:

Հանդիպմանը կողմերը ձեւակերպեցին համագործակցության հուշագիրը:


Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման ազգային հանձնաժողովի նախագահ Իրինա Միլոդովան հայ գործընկերներին ծանոթացրեց հանձնաժողովի գործունեության եւ առաջիկա ծրագրերի հետ:

100 ԼԱՐԻ՝ ՎՐԱՍԱԿԱՆ ԱՅՑԵԳՐԻ ՀԱՍԱՐ

Վրաստանի արտաքին գործերի նախարարության կողմից տրվող արտագաղթային (էմիգրացիոն) այցելուի համար օտարերկրացիները վճարելու են 100 լարի (շուրջ 57 ԱՄՆ դոլար): Վերոնշյալ 100 լարի տուրքի ներդրումը նախատեսված է համապատասխան օրենքում կատարված փոփոխություններով:

Վրաստանի խորհրդարանին արդեն ներկայացվել է օրինակական հիմունքներով գտնվող օտարերկրացիներին արտագաղթային այցելուի հանձնելու եւ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը: Այդ նպատակով օտարերկրացիները համապատասխան դիմումով դիմելու են ԱԳՆ-ին, Վրաստանում օրինականորեն գտնվելու ժամկետի սպառումից առնվազն 45 օր շուտ:

ՎՐԱՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՎԵՐԱՂՈՐԶԱՆ ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ



Վրաստանի զինված ուժերի լեռնահետախուզական զորամարտակի 147 զինվորականներ վերադարձան Աֆղանստանից: Նրանք վերջին յոթ ամսվա ընթացքում միջազգային ուժերի շարքում Աֆղանստանում իրականացնում էին խաղաղարարական առաքելություն:

Նշենք, որ Վրաստանը Աֆղանստանում իրականացվող գործողություններին սկսեց մասնակցել 2009 թվականից: Որոշ ժամանակ այդ երկրում ծառայում էին 1570 վրաց զինվորականներ: Ընթացիկ տարվա հունիսին Վրաստանի կառավարությունը որոշեց մինչեւ 900 զինվորականը նվազեցնել Աֆղանստանում գտնվող վրաց զինվորականների թիվը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԱՐՏՈՆՅԱԼ ԱԳՐՈՎԱՐԿԵՐ» ԾՐԱԳՐՈՒՄ

Վրաստանի կառավարությունը ագրովարկերի ծրագրի օպտիմիզացման, ֆերմերական տնտեսությունների ամրապնդման, ֆերմերների կոոպերացման աջակցության եւ հաղորդակցության բարելավման նպատակով նախատեսված է օրինակական ծրագրի փոփոխություններ են նախատեսված «Արտոնյալ ագրովարկերի մասին» օրենքում:

Փոփոխությունների համաձայն, արտոնյալ ագրովարկերի նախագծի օպտիմիզացման արդյունքում ստեղծվում են երկու բաղադրիչներ՝ արտոնյալ ագրովարկեր շրջանառու միջոցների համար եւ արտոնյալ ագրովարկեր հիմնական միջոցների համար:

Ինչպես նշեցին Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունում, ընթացքի մեջ է նաեւ ագրոպահովագրության նա-

խագիծը: Այդ նախագծով արդեն հանձնվել է 12 հազար պոլիս՝ ընդհանուր առմամբ՝ 70 միլիոն լարի գումարով: Գերատեսչության հավաստմամբ, ֆերմերներին հետաքրքրել է նորամուծությունը, եւ նրանք ակտիվորեն համագործակցում են ապահովագրական ընկերությունների հետ: Պիլոտային ծրագրի նպատակը, որը կազմված էր 5 միլիոն լարի գումարից, գործնականում արդեն իրաց-

վել է եւ նախագծի բյուջեն ավելացվել է:

Ինչպես նշեցին գյուղատնտեսության նախարարությունում, նախագծի նպատակը գործնականում կատարվել է, աշխատանքային մշակաբույսերի ապահովագրությունը շարունակվում է: «Ինչ վերաբերում է զարմանացան մշակաբույսերի ապահովագրությանը, ապա դա կանցկացվի մինչեւ տարեվերջ: Քանի որ վերոնշյալ նախագծի կապակցությամբ, շահագրգռվածությունը մեծանում է, այն կշարունակվի նաեւ հաջորդ տարի»,- հայտարարեցին գյուղատնտեսության նախարարությունում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿԱՎԵԼԱՑՎԻ



Նոյեմբերի 3-ին կայացած Վրաստանի կառավարության նիստում, գործադիրը քննարկեց ուսուցիչների աշխատավարձի ավելացման հարցը:

Եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, հարցը վերջնականապես կկարգավորվի մոտ օրերին, երբ կհստակեցվի նախարարության բյուջեի ավելացման հարցը: «Նիստին մենք հստակեցրինք բյուջեի առանձին հոդվածները, հետեւաբար մոտ օրերին կկարգավորվի նաեւ ուսուցիչների աշխատավարձի ավելացման հարցը: Աշխատա-

ւսուցիչների աշխատավարձի ավելացումը ծրագրվել է իրականացնել 2015 թվականի սեպտեմբերին, մոր ուսումնական տարվա համար:

«Բազային աշխատավարձը կավելացվի 50 լարիով, իսկ բարձր կատեգորիայի ուսուցիչների աշխատավարձը կավելացվի շուրջ 200 լարիով»,- ասաց ֆինանսների նախարարը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԿԱՎԵԼԱՑՎԻ

2015 թվականի սեպտեմբերի մեկից սոցիալապես անպաշտպանների կենսաթոշակը կավելացվի:

Այդ մասին նոյեմբերի 3-ին, կառավարության նիստի ավարտից հետո, հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոբիձե եւ հավելեց, որ կենսաթոշակի ավելացումը կախված է շնորհված միավորների քանակից եւ առավելագույն

չափը կազմում է 25 լարի: Նրա խոսքերով, 2015 թվականի բյուջեն, նախնական նախագծի համեմատությամբ, ավելացվում է 170 միլիոն լարիով: «Շատ զերտեսչությունների ֆինանսավորումը ավելացվում է: Մասնավորա-

պես, առողջապահության ուղղությամբ, ավելացումը կազմում է 25 միլիոն լարի: Դրա մի մասը, կախված շնորհված միավորների քանակից, կօգտագործվի սոցիալապես անպաշտպանների կենսաթոշակի ավելացման վրա»,- հայտարարեց Նոդար Խաղոբիձե:

Նրա խոսքերով, արդեն 2016 թվականին, բոլոր կենսաթոշակառուների կենսաթոշակները կավելացվեն:

ԱՌՈՂՋԱՊԱՐԻԹՅՈՒՆ

ԷԲՈԼԱ ՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԳԵԼԱԿԱՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ

Վրաստանի կառավարությունը մշակել է հատուկ ծրագիր երկրում երկա վիրուսի տարածումը կանխելու համար եւ գործողությունների ծրագիր՝ Վրաստանում վիրուսի հայտնաբերման դեպքում:

Երկա վիրուսով վարակվելու կասկածանքով հիվանդների հայտնաբերման դեպքում, նրանք կանցնեն կարանտին եւ բուժում Վրաստանի Ինֆեկցիոն ախտաբանության, ՉԻԱՀ-ի եւ կլինիկական իմունաբանության գիտահետազոտական կենտրոնում: Երկա վիրուսով հիվանդի հայտնաբերելու դեպքում, Վրաստանում գործի կդրվի

Արտակարգ իրավիճակներին հակազդման ազգային ծրագիրը, կարգվել են արտասահման ուղեւորությունները բոլոր նրանց համար, ովքեր շփվել են հիվանդի հետ, բացի բժշկական տարահաման դեպքերի: Ըստ որում, հիվանդի հետ բոլոր շփվողներն առողջ կհամարվեն սոսկ այն դեպքում, եթե նրանց մոտ լինի հիվանդության առկայու-

թյան թեստի բացասական ցուցանիշ, որը կատարվում է երկու անգամ՝ 48 ժամ տարբերությամբ:



Երկա վիրուսով վարակվելու կասկածանքով հիվանդների համար նվազագույնի կհասցվեն սրկումների եւ կաթոցիչների հետ կապված բուժընթացները, իսկ օգտագործված բոլոր ներարկիչները կոչնչացվեն փակ կոնտեյներում:

ՄԻԱՎՈՎ ՎԱՐԱԿԱՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

2014 թվականի սկզբից ի վեր Վրաստանում գրանցվել է ՄԻԱՎ-ով վարակվելու 423 նոր դեպք:

Այդ մասին հաղորդել է Վրաստանի Ինֆեկցիոն պաթոլոգիայի, ՉԻԱՀ-ի եւ կլինիկական իմունոլոգիայի գիտագործնական կենտրոնը:

2014 թվականի հոկտեմբերի 14-ի տվյալներով, գրանցվել է ՄԻԱՎ-ով վարակվելու 4554 դեպք, որոնցից 3344-ը բաժին է ընկնում տղամարդկանց, իսկ

1198-ը՝ կանանց: ՉԻԱՀ է զարգացել է 2738-ի մոտ: Ներկայումս բուժման մեջ են 2420-ը:

ՄԻԱՎ-ով վարակվելու հիմնական պատճառը երկրում մնում է ներարկումային թմրանյութերի օգտագործումը (50տոկոս), երկրորդ տեղում հետերոսեքսուալ սեռական շփումներն են (41,1 տոկոս):

Վրաստանում ՉԻԱՀ-ով հիվանդանալու առաջին փաստն արձանագրվել է 1989 թվականին, այդ ժամանակվանից դրա զոհ է դարձել 959 մարդ:

ՊԱՌԱՎՏՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ԶԷ ՄԵԿ ՆԱԽԱՐԱՐԻ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԻՅ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դեմոկրատներ» կուսակցությունից գործադիր եւ օրենսդիր մարմինների մի շարք անդամների մասնակցությամբ, նույն-բերի 4-ին հրավիրված ճեպասուլիսում հայտարարեց պաշտպանության նախարարության դեմ միտումնավոր գործի մա-սին: Ալասանիան տեղի ունեցածը անվանեց եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման ուղղուց շեղվելու միտում:

Իրակլի Ալասանիայի ասուլիսին զուգընթաց խորհրդա-րանական մեծամասնության հետ անցկացված համդիպ-ման ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղա-րիբաշվիլին համոզեց եկավ հատուկ հայտարարությամբ: Վարչապետը հայտարարեց պաշտպանության նախարարի պաշտոնաթողության մասին, ասելով, «նախարարը, որն իր ընկերներին գնումներ ու հայտամրցույթներ իրականացնե-լու հնարավորություն է տալիս, չի կարող նախարար լինել»:

Նա անպատասխանատու համարեց Ալասանիայի հայ-տարարությունը այն մասին, որ դատախազության գործո-ղություններն ուղղված են այն բանին, որ խանգարեն երկ-րի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրմանը:

«Վրաստանի կառավարության արտաքին քաղաքակա-նությունը կապված չէ մեկ նախարարի դիրքորոշման հետ, դա անպատասխանատու հայտարարություն է»,- հայտա-րարեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց. «Ես որոշեցի պաշտոնաթող անել պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիային, որպեսզի թույլ չտամ պաշտպանության նա-խարարության սեփականաշնորհում եւ չխանգարեմ հե-տաքննության աշխատանքին»:

Ընդ որում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշ-վիլին որոշում ընդունեց նաեւ պաշտոնաթող անել պաշտ-պանության նախկին նախարար Իրակլի Ալասանիայի բո-լոր տեղակալներին:

Իրակլի Ղարիբաշվիլին հայտնեց նաեւ, որ Վրաստանի պաշտպանության նոր նախարար կդառնա Մինդիա Ջանե-լիժեն, որը մինչեւ վերջին ժամանակներս զբաղեցնում էր Պետական անվտանգության եւ ճգնաժամերի կառավար-ման խորհրդի քարտուղարի պաշտոնը:

Իր հերթին, Իրակլի Ալասանիան վարչապետի ընդունած որոշումը գնահատեց որպես «հնարավոր մրցակցի եւ ընդ-դիմախոսի քաղաքական ոչնչացման փորձ, քաղաքական սպանության փորձ»:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԿՈՒՐՍԻՆ ԵՎ ԿՈՒՐՍԻՆ ԵՎ ԿՈՒՐՍԻՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու կողմից Իրակլի Ալասանիային պաշտպանության նախարարի պաշ-տոնից ազատելու մասին հայտարարությունից անմիջա-պես հետո, իր պաշտոնաթողության մասին հայտարարու-թյամբ համոզեց եկավ Վրաստանի եվրոպական ու եվրատ-լանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնա-խարար Ալեքսի Պետրիաշվիլին:

Նույն օրը 5-ին պաշտոնաթողության վերաբերյալ հայ-տարարությամբ ելույթ ունեցավ Վրաստանի արտաքին գոր-ծերի նախարար Մայա Փանջիկիժեն:

Նրա հայտարարությամբ, ինքը՝ նախարարի բոլոր տե-

ղակալների հետ պաշտոնաթող է լինում եւ լքում «Վրացա-կան երազանք» կուլիցիայի շարքերը:

Իր պաշտոնաթողության մասին հայտարարել է նաեւ ՆԱ-ՏՕ-ում Վրաստանի մշտական ներկայացուցիչ Լեան Դոլիժեն:

Թեպետ, ինչպես հայտնի դարձավ նույն օրվա վեցին, փոխնախարարներ Դավիթ Ջալաղանիան եւ Թամարա Բե-րուչաշվիլին որոշել են ժամանակավորապես մնալ գերա-տեսչությունում եւ շարունակել աշխատանքը:

Նշենք, որ Ալեքսի Պետրիաշվիլին եւ Մայա Փանջիկի-ժեն, Ալասանիայի «Մեր Վրաստան-Ազատ դեմոկրատներ» կուսակցության անդամներ են:

ԹԵՄ ԾՈՒՈՒԿՅԱՆ ՆՐԱՄԱՐՎԵՑ ԳՆՏՆԱԾՈՒԹՅՈՒՆԻՅ



Պաշտպանության նախկին նախարար Իրակլի Ալասանի-այի «Ազատ դեմոկրատներ» կուսակցության անդամ, Վրաս-տանի արդարադատության նախարար Թեա Շուլուկիա-նին հրաժարվեց պաշտոնա-թող լինել: Նրա խոսքերով, ին-քը մտադիր է վարչապետ Իրակ-լի Ղարիբաշվիլու գլխավորած կառավարության հետ միասին շարունակել եվրաինտեգրման ուղին: «Պատճառներ չունեն կասկածելու, որ ներկայիս կառավարությունը հրաժարվել է եվրոպական ուղուց, հետեւաբար մնում են իմ պաշտո-նում մեր թիմի հետ միասին»,- հայտարարեց նա:

Նշենք, որ «Ազատ դեմոկրատներ» խորհրդարանական խմբակցությունից դուրս գալու եւ խորհրդարանական մե-ծամասնության շարքերում մնալու մասին հայտարարել են պատգամավորներ Գելա Սամխարաուլին եւ Գիա Ջափա-րիժեն: Ենթադրվում է, որ խմբակցության շարքերը կլքի նաեւ Բորիս Գրիգորիժեն մեծամասնական պատգամավոր Գեդե-ան Փոփաժեն:

«ԱՅՍ ԳԵՄՈՒԿԱՆՆԵՐԸ» ԼԵՃՈՒՆ ԿՈՒՐՍԻՆԻՅ ԵՎ ԿՈՒՐՍԻՆԻՅ

Նույն օրվա ինչոֆին, որպես նախօրյակին տեղի ունեցած իրադարձությունների տրամաբանական շարունակություն, «Մեր Վրաստան-Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը լքեց «Վրացական երազանք» իշխող կուլիցիայի շարքերը: Այդ մասին հայտնի դարձավ «Վրացական երազանքի» կենտրոնականում տեղի ունեցած կուլիցիայի անդամ կուսակցությունների ներկայացուցիչների ընդլայնված հան-դիպման ավարտից հետո, հանդիպում, որտեղ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին «Մեր Վրաստան-Ազատ դեմոկրատներ» կուսակցությանը մեղադրեց սաբոտաժի մեջ: «Կաբինետի անդամների ցուցադրական պաշտոնաթո-ղությունն սպառնալիքի տակ է դնում պետությունը եւ սա-բոտաժի է նմանվում»,- հայտարարեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլու խոսքով Ալասանիայի կուսակա-ցության անդամներն իրենց հայտարարություններով սպառ-նալիք են ստեղծում Վրաստանի անվտանգության համար:

Կուլիցիայից «Ազատ դեմոկրատներ» դուրս գալու արդյունքում, այդ կուսակցությունից խորհրդարանի 10 ան-դամները եւս դուրս են գալիս խորհրդարանական մեծա-մասնության շարքերից:

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ ՓՈՒՆԵԼ ՆԵՐԱՎՈՐ ԶԷ»

Երկրում ստեղծված իրա-վիճակի կապակցությամբ, Վրաս-տանի նախագահ Գիորգի Մարգ-վելաշվիլին ուղերձով դիմեց կառավարությանը եւ խորհր-դարանին:



Նույն օրվա 6-ին անցկաց-րած ճեպասուլիսում Վրաստա-նի նախագահը հայտարարեց, որ վրաց քաղաքագետները ծառայում են այնպիսի ժողովր-դին, որը հստակ է իր արժեքների ընտրությունում: «Դա եվ-րոպական ընտրությունն է, որը արվել է ոչ թե մեր կամ որեւէ քաղաքագետի, այլ մեր նախնիների կողմից: Այդ ընտրու-թյանը ծառայելը մեծ պատիվ է: Հետեւաբար, Վրաստանի եվրոպական կուրսի փոփոխումը, անհնարին է»,- հայտա-րարեց նախագահը եւ հավելեց. «Ինձ տրված իրավասու-թյունների շրջանակներում դիմում եմ Վրաստանի կառա-վարությանն ու խորհրդարանին: Թող կառավարության մո-տակա միստում քննարկվի եվրամիության հետ ասոցիաց-ման համաձայնագրի եւ ՆԱՏՕ-ի հետ համագորակցության փաթեթի իմպլեմենտացիայի արդյունավետության հարցը: Նաեւ խորհրդարանից խնդրում եմ, մոտակա միստում հաշ-վի առնել նախագահի խորհրդարանին եւ հասարակայնու-թյանն ուղղված արտակարգ ուղերձը»,- ընդգծեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԳՎԻԹ ՌԻՍՈՒՓՈՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՆԵՏԵՐՄԱՆ ՈՍՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՓՈՓՈՒՆ Է»



Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ռուսուփաշ-վիլին երկրի ներսում եւ նրա սահմաններից դուրս բոլորին վստահեցրեց Վրաստանի եվ-րաինտեգրման կուրսի անափո-փոխության մեջ: Նրա խոսքե-րով, եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին ինտեգրման ուղին անփո-փոխ է եւ հաստատվել է օրենս-դիր մարմնի կողմից: Այդ ուղուն հավատարմությունը հաստատեց նաեւ Վրաստանի վարչա-պետը, առավել եւս, որ այդ ուղին այս կառավարության հաս-տատման ժամանակ հռչակվել էր որպես երկրի զարգացման միակ ուղի»,- հայտարարեց խորհրդարանի խոսնակը:

Նրա հավաստմամբ, երկրում առկա դիմակայության եր-կու կողմերը շտապեցին, ինչն էլ հանգեցրեց ստեղծված իրավիճակի ծագմանը:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԳԻՐԳԻ ՔԱՂԱՔԻՉԵ. «ԶԳՈՒՇԱՅԵՔ «ԲԱՆԿԱՅԻՆ ԹԱԿԱՐԴՆԵՐԻՅ»

Վերջին ժամանակներում հաճախակի են դարձել երկրում գործող բանկերի գործունեությունից դժգոհ քաղաքացիների ելույթները:

Խոսքը վերաբերում է ինչպես հիպոթեկային, այնպես էլ սովորա-կան վարկերից օգտվող քաղաքա-ցիներին, որոնք տոկոսադրույթնե-րի մարման տեսանկյունից, մեծ մա-սամբ, վերջում հայտնվում են եթե ոչ անելանելի, ապա շատ ծանր իրավիճակում: Ստեղծված բարդու-թյունների մասշտաբներն այնքան մեծ են, որ հիմնախնդիրն իր վրա գրավեց նաեւ երկրի գործադիր իշ-խանության ուշադրությունը: Հաշ-վի առնելով սույն համագամանքը, գործադիրը Վրաստանի ազգային բանկի ղեկավարությանը հանձնա-րարեց խիստ վերահսկողություն սահմանել բանկերի ինչպես հիպո-թեկային, այնպես էլ վարկային քա-ղաքականության վրա, բացահայ-տել այն մեխանիզմները, որոնց օգ-նությամբ վարկատու բանկերը կա-րողանում են ստանալ աննախա-դեպ եկամուտներ:

րից», որոնց շնորհիվ բանկերը կա-րող են բավականին բարդ իրավի-ճակներ ստեղծել բանկային ծա-ռայություններից օգտվողներին: Կոմերցիոն բանկերի ներկայա-ցուցիչների հետ վերջերս կայա-ցած հանդիպմանը Գիորգի Քաղա-գիժեն քաղաքացիների ուշադրու-թյունը բեւեռեց այն հանգամանքի վրա, որ բանկերի հետ վարկային պայմանագիրը ձեւակերպելիս հարկ է ուշադրությանը ծանոթանալ դրա դրույթներին եւ, ընդհանրապես, բա-ցառիկ զեչություն ցուցաբերել բան-կային այնպիսի ծառայություննե-րից օգտվելիս, ինչպիսիք են վճար-ման տարաժամկետման, հետաձ-գումը, վարկային քարտը, պարտ-քի մարումը եւ այլն:

«Վերջին հետազոտություննե-րի վերլուծությունը վկայում է այն մասին, որ բանկային համակար-գում զգալիորեն ավելանում է սպա-ռողական վարկավորումը: Եթե դրան ավելացվեն նաեւ միկրոֆինանսա-կան կազմակերպությունները, ակն-թարթային տարածակետավորու-մը, գրավատները եւ այլն, ապա ստեղծվում է իրավիճակ, երբ բնակ-չության զգալի հատվածը պարբե-րաբար մարում է պարտքերը, ինչը

լուրջ սպառնալիքներ է ստեղծում նրանց ֆինանսական կայունությա-նը: Եթե հաշվի առնենք այն հան-գամանքը, որ Վրաստանը պատ-կանում է նվազ եկամուտներով երկրների թվին, ապա զարմանա-լի ոչինչ չկա, որ շատերը չեն կա-րողանում վերջնականապես մա-րել պարտքերը, ուստի բանկին դի-մում են պարտքի մասնատման խնդ-րանքով: Տվյալ պարագայում հիմ-նախնդիրն այն է, որ ֆինանսական ինստիտուտները, նման պայման-ներում, հին վարկը մարելու հա-մար այդ մարդկանց առաջարկում են վերցնել նոր վարկ: Որպես օրենք դա հիմնախնդիր ժամանակավոր լուծման տարբերակ է, իսկ արդ-յունքում այդ ծառայությունից օգտ-վողները շատ ավելի մեծ գումար-ներ են վճարում:

Դիմելով բանկերի հաճախորդ-ներին, կոչ են անում վարկերի ստաց-ման ժամանակ ոչ միայն ուշադրու-թյամբ ծանոթանալ պայմանագրի դրույթներին, այլեւ առավելագույն զգուշություն ցուցաբերել տարբեր տեսական վճարումների տարա-ժամկետավորման, հետաձգման, վարկային քարտերի, պարտքերի մարման եւ այլնի նկատմամբ: Մեր պայմաններում դրանք բավակա-նին թանկ վարկեր են, ուստի շատ ավելի մանրակրկիտ պետք է ծրագ-

րել առկա ֆինանսական հնարավորությունները: Հարկ չկա դիմել ռիսկի եւ ստացված վարկով զնել պերճության առարկաներ»,- հայտարարեց Ազգային բանկի նախագահը: Նրա խոսքերով, առկա է բանկերի կողմից ներկա-յացվող ծառայությունները ներկայացվող պահանջար-կին առաջելագույն հար-մարացնելու անհրաժեշ-տությունը:

«Նախորդ վարկի մարման հա-մար նոր վարկ վերցնելը, կամ վար-կային նոր քարտի միջոցով նա-խորդի պարտքի մարումը եւ այլն, հիմնախնդիր կարգավորում չի կա-րող համարվել: Նման դեպքերում բացառված չէ, որ վարկի տոկոս-ների գումարը լինի ավելի մեծ, քան վարկով վերցնած գումարն է, քան-զի Վրաստանում նման ծառայու-թյան տոկոսադրույթները բավա-կանին բարձր են: Ի վերջո, մար-դիկ ստիպված են լինում վարկի դիմաց գրավի տակ դնել անշարժ գույքը: Սույն գործընթացը մեղմ ասած «վարկային թակարդ» է: Որ-պեսզի նման ոչինչ տեղի չունենա, մարդիկ, նախ՝ պետք է լրիվությամբ գիտակցեն այն ռիսկի մակարդա-կը, որը բովանդակվում է բանկար-



ժեք վարկերի ստացումը, իսկ բան-կերը, իրենք պետք է համապա-տասխան գնահատեն իրենց պա-տասխանատվությունը այդ մարդ-կանց առջև»,- հայտարարեց Գի-որգի Քաղաքագիժեն եւ հավելեց, որ Ազգային բանկը երկու ուղղությու-ններով ակտիվ գործունեություն է ծավալել. «Առաջինը, դա այն է, որ բանկերը իրենց ցուցաբերած սպա-սարկունները առավելագույն պետք է հարմարացնեն սպառողական շուկայում ստեղծված իրավիճա-կին եւ երկրորդը, որպեսզի բոլոր սպասարկումներն ու բոլոր սպառ-նալիքները, որոնք բովանդակվում են տարբեր տեսակի վարկերում, լինեն առավելագույն թափան-ցիկ»,- ընդգծեց Ազգային բանկի նախագահը:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ